

ԷԹԻԿԱՅԻ ԿՈՂԵՔՍ

Սույն Էթիկայի կողեքսի մասին

Սույն Էթիկայի կողեքսը գործում է որպես ուղեցույց՝ վարքագծի և որոշումներ կայացնելու համար, ՀՀՄԿ արժեքներին և Էթիկայի չափանիշներին համապատասխան:

Սույն Էթիկայի կողեքսը մշակվել է տնօրենների խորհրդի և գործադիր տնօրենի կողմից՝ անդամների հետ խորհրդակցելով: Այն գործում է որպես ուղեցույց՝ բոլոր նրանց համար, ովքեր ընդգրկված են համաշխարհային հմտությունների շարժմանը: Սույն Էթիկայի կողեքսը սահմանում է Էթիկայի այն սկզբունքները, արժեքները և չափանիշները, որոնք ուղղորդում են Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության վարքագիծը, որոշումները, գործընթացը և համակարգերը այնպես, որ երկուսն էլ բավարարում են մեր հիմնական բաժնետերերի կարիքները և հարգում բոլոր անձանց և կազմակերպությունների իրավունքները, որոնց վրա մեր գործողությունները որևէ կերպ ազդել են:

Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության հիմնարար արժեքներն են ազնվությունը, թափանցիկությունը, արդարությունը, գործընկերությունը և նորարարությունը: Մրանք սովորաբար դիտվում են որպես Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության հիմնասյուներ:

Սույն Էթիկայի կողեքսի որևէ մաս ենթակա չէ հանման կամ դադարեցման:

ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ազնվություն

Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության հիմքը մեր ազնվությունն է: Մենք բաց ենք, ազնիվ և հուսալի բոլոր բաժնետերերի հետ հարաբերություններում, ինչպես նաև այն կազմակերպությունների և անձանց նկատմամբ, որոնց հետ մենք աշխատում ենք կամ որևէ կերպ ազդեցություն ենք ունենում:

Շահերի բախում.

Ոչ մի աշխատակից կամ կամավոր չի կարող ներգրավվել այնպիսի գործունեության մեջ, որն ուղղակիորեն հակասում է Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության շահերին: Շահերի բախումը կարող է ընդգրկել պաշտոնավարումը, բաժնետիրական կապիտալում նշանակալից մասնակցությունը, ինչպես նաև ընտանիքի անդամների՝ որպես աշխատողներ ներգրավումը:

Կազմակերպության գործարարության հետ կապված ցանկացած անձնական շահ պետք է բացահայտվի:

Բաժնետերերը պարտավոր են հայտարարել իրենց պարտավորությունների հետ կապված ցանկացած անձնական շահի վերաբերյալ և քայլեր ձեռնարկել լուծելու համար ցանկացած կոնֆլիկտ, այնպես, որ պաշտպանեն Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության բաժնետերերի շահերը:

Աշխատողները կամ կամավորները դրսի կազմակերպությունների կամ անհատների հետ չեն մտնում որևէ ֆինանսական կամ այլ պարտավորության մեջ, որոնք կարող են ազդեցություն ունենալ նրանց վրա՝ իրենց պարտավորությունների կատարման ժամանակ: Խորհրդի անդամները, աշխատակազմը և այլ անձինք, որոնք պայմանագիր են կնքել ՀՀՄԿ-ի հետ, պարտավոր են հետևել ՀՀՄԿ Նվերի Ընդունման քաղաքականությանը:

Թափանցիկություն և պատասխանատվություն

Շիտակություն.

Բոլոր բաժնետերերը հնարավորինս բաց են իրենց կայացրած որոշումների կամ ստանձնած գործողությունների մեջ: Նրանք տալիս են պատճառաբանումներ իրենց որոշումների համար, իսկ տեղեկատվությունը սահմանափակում են միայն այն դեպքում, երբ դա պահանջում է ավելի մեծ հասարակական շահը:

Ընտանիք և ընկերներ.

Որոշ դեպքերում ընտանիքի անդամները կամ աշխատողների ավելի մոտ ընկերները կարող են աշխատել Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության համար: Նման դեպքերում Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության աշխատակիցները կամ կամավորները հնարավորինս խուսափում են այնպիսի աշխատանքային իրավիճակներից, որոնք ընտանիքի անդամների կամ անձնական մոտ հարաբերություններ ունեցող անհատների միջև առաջացնում են ուղղակիորեն հաշվետու լինելու փոխհարաբերություններ:

Արդարություն

Օբյեկտիվություն.

Համաշխարհային հմտությունների գործարարության ընթացքում (այդ թվում՝ պաշտոնների նշանակումը, պայմանագրերի շնորհումը կամ անհատներին պարգևների և մրցանակների շնորհում առաջադրելը) բոլոր ընտրությունները կատարվում են հիմք ընդունելով արժանիքները:

Ներգրավվածություն.

Մենք նպաստում ենք այնպիսի ընդգրկում միջավայրի ստեղծմանը, որը ներառում է փոփոխություններ, նոր գաղափարներ, հարգանք անհատի նկատմամբ և հաջողության հասնելու համար հավասար հնարավորություններ:

Հավասար հնարավորություններ բոլոր մրցակիցների համար.

ՀՀՄԿ մրցույթում բոլոր ներգրավվածները գործում են ազնվության, շիտակության, արդարության առավել բարձր մակարդակով «բոլոր մրցակիցներին հավասար հնարավորություններ» ապահովելու համար, անկախ երկրից, ռասայից, սեռից, կրոնից, մշակույթից, փիլիսոփայական կամ քաղաքական կարծիքից, ամուսնական կարգավիճակից, սեռական ուղղվածությունից, լեզվից կամ այլ հիմքերից:

Բողոքներ.

Բոլոր բողոքները քննվում են հետաքննության գործընթացով, որը հարգում է բնական արդարադատության սկզբունքները: Մրցույթի ժամանակ օգտագործվում է խնդրի լուծման կայուն և պրոֆեսիոնալ գործընթաց:

Գործընկերություն

Համայնք.

ՀՀՄԿ-ն ջանում է աջակցել այն համայնքներում, որտեղ նա գործում է, կրթական գործողությունների և ներդրումների միջոցով:

Նորարարություն և գերազանցություն

Նորարարություն.

Մենք ողջունում և խրախուսում ենք նորարարությունը, որն օգնում է գոյություն ունեցող շրջանակներում առավել արդյունավետորեն հասնել մեր նպատակներին:

Գերազանցություն.

Մենք հասնում ենք գերազանցության այն ամենում, ինչ անում ենք:

Արժանապատվություն

Մարդու իրավունքներ.

ՀՀՄԿ-ն հարգում է բոլոր նրանց, ովքեր ընտրում են շարժման համար աշխատելը և կամավոր գործունեություն դրսևորելը: Նախատեսվում է, որ բոլոր բաժնետերերը միմյանց նկատմամբ պետք է լինեն բաց, ազնիվ և բարեկիրթ:

Բազմակողմանիություն.

Բազմակողմանիությունը Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության հզորությունն է: Յուրաքանչյուր ներգրավված անձ պետք է հարգի այն մարդկանց և նրանց տարբեր մշակույթները, որոնց հետ նրանք աշխատում են: Որպես շարժում մենք ակնկալում ենք բազմակողմանիություն բոլոր մակարդակներում և աջակցում ենք այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ բոլոր ընդգրկված անձինք կարող են զարգանալ և աջակցում ենք նրանց ողջ կարողությունների դրսևորմանը: ՀՀՄԿ-ն և նրա հյուրընկալող անդամները (ՀՀՄԿ իրադարձությունների) պետք է երաշխավորի, որ ՀՀՄԿ իրադարձությունները չեն հակասում կրոնական կամ այլ փառատոններին:

Բռնություն.

ՀՀՄԿ-ն չի հանդուրժում բռնության որևէ տեսակ, լինի դա սեռական, ֆիզիկական կամ մտավոր:

Շրջակա միջավայր և կայունություն

Շրջակա միջավայր.

ՀՀՄԿ-ն ձգտում է նվազեցնել իր գործողությունների արդյունքում բնական միջավայրի և սահմանափակ ռեսուրսների վրա ցանկացած վնասակար ազդեցություն: Մենք սահմանում ենք շրջակա միջավայրի այնպիսի չափանիշներ, որոնք թե ցանկալի են և թե հասանելի և լիովին համապատասխանում են շրջակա միջավայրին վերաբերող օրենսդրությանը:

Կայունություն.

Մենք ձգտում ենք ընդլայնել շարժումը և դրա ազդեցությանը, որը տնտեսապես և էկոլոգիապես կայուն է և ապահովում է շարժման երկարաժամկետ կենսունակությունը:

Առողջապահություն և անվտանգություն

Գերակայություն.

ՀՀՄԿ-ն երաշխավորում է ապահով և առողջ միջավայր բոլոր բաժնետերերի համար և որևէ պատճառով վտանգի տակ չի դնում որևէ բաժնետիրոջ առողջությունը կամ անվտանգությունը:

Հյուրընկալող երկրի կանոնակարգերը.

Բոլոր բաժնետերերը հետևում են Հյուրընկալող երկրի առողջապահության և անվտանգության կանոններին, ինչպես նաև՝ հատուկ առողջապահության և անվտանգության կանոններին, որոնք կիրառելի են որոշակի հմտության համար:

Առողջապահության և անվտանգության հետ կապված հարցերի զեկուցումը.

Բոլոր բաժնետերերը պարտավոր են անհապաղ զեկուցել իրենց ցանկացած մտահոգության, անվտանգության կանոնների խախտումների և պատահարների մասին:

Ղեկավարություն

Արժեքներին հավատարիմ լինելը.

Բոլոր առաջնորդները օժանդակում և աջակցում են սույն էթիկայի կանոններով սահմանված ՀՀՄԿ արժեքներին և սկզբունքներին և իրենց գործունեությամբ ցույց են տալիս այդ արժեքներին և սկզբունքներին հավատարիմ լինելը:

Կանոններին հետևելու կուլտուրա.

Առաջնորդները խրախուսում են այնպիսի միջավայր, որտեղ ակնկալվում և գնահատվում է կանոններին հետևելը: Ոչ ոք ՀՀՄԿ աշխատողներից կամ կամավորներից չի կարող պահանջել խախտել օրենքը կամ գործել ընդդեմ սույն էթիկայի կանոններով սահմանված ՀՀՄԿ արժեքներին և սկզբունքներին, կամ ՀՀՄԿ քաղաքականությանը, կանոններին և կանոնակարգերին:

Հարցերի զեկուցումը.

Բոլոր բաժնետերերին խրախուսվում է բարձրացնել ցանկացած հարց կամ մտահոգություն՝ կապված վարքագծի հետ: ՀՀՄԿ-ն արգելում է որևէ կողմի հակընդդեմ կամ պատժիչ գործողություններ ձեռնարկել որևէ անձի նկատմամբ, ով զեկուցում է օրինական մտահոգության վերաբերյալ:

Գաղտնիություն

ՀՀՄԿ բաժնետերերը չեն բացահայտում իրենց վստահված գաղտնի տեղեկատվությունը: Կողմերից ոչ մեկը չի բացահայտում որևէ տեղեկատվություն՝ օգուտ կամ շահ ստանալու, կամ որևէ անձի կամ կազմակերպության հեղինակությունը վնասելու նպատակով: Բողոքը ներկայացնող անձնանց գաղտնիությունը ապահովվում է:

Համապատասխանություն և պատասխանատվություն

Գործադիր տնօրենը պարտավոր է իրականացնել և կառավարել էթիկայի կոդեքսը ամբողջ կազմակերպությունում և իր բաժնետերերի նկատմամբ: Տնօրենների խորհուրդը պարտավոր է հսկել և ղեկավարել էթիկայի կոդեքսը:

Այն անձինք, ովքեր մեղավոր են ճանաչվում էթիկայի կոդեքսը խախտելու մեջ, ենթարկվում են կարգապահական միջոցառումների՝ խախտման տեսակին և մակարդակին, ինչպես նաև՝ այն պայմանագրին/համաձայնագրին համապատասխան, որը կապված է անձի կամ կազմակերպության՝ ՀՀՄԿ փոխհարաբերությունների հետ: